**ԿԱՐԾԻՔ**

**(պաշտոնական ընդդիմախոսի)**

**Ի9.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Նարինե Վյաչեսլավի Ասրյանի «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ**

Հրապարակային պաշտպանության ներկայացված «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» թեմայով ատենախոսությունն արդիական գիտահետազոտական աշխատանք է, որի արդիականությունը, կարևորությունը և տեսա-կիրառական նշանակությունն առավել քան հիմնավորված է. մասնավորապես, ատենախոսությունն արժեքավոր է այն հանգամանքով, որ անդրադառնում է ոչ միայն վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության ձևավորման ու զարգացման գլոբալ միտումներին, այլև համակողմանիորեն վերլուծում է այդ գործընթացների դրսևորումները հետխորհրդային տարածաշրջանում՝ հաշվի առնելով վերջինիս ինստիտուցիոնալ, սոցիալ-տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները:

Հատկապես կարևոր է, որ հետազոտության առանցքում դրված է Հայաստանի Հանրապետության դեպքային ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն է տալիս տեսական ընդհանրացումները համադրել ազգային փորձի հետ, բացահայտել գործող քաղաքականությունների ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև ձևակերպել գործնական նշանակություն ունեցող առաջարկություններ՝ ուղղված ինչպես վերաբաշխման կառուցակարգերի, այնպես էլ պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ու սոցիալ-տնտեսական անհավասարությունների մեղմացմանը:

Վերոնշյալից բխում է, որ թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք փոխկապակցված գործոններով: Նախ՝ պետության սոցիալ-տնտեսական կայունության ապահովման անհրաժեշտությամբ, քանի որ պետական վերաբաշխիչ քաղաքականությունը միտված է ոչ միայն տնտեսական աճի խթանմանը, այլև դրա կայուն և հավասարակշռված բնույթի ապահովմանը: Երկրորդ՝ տնտեսական անհավասարությունների մեղմման և սոցիալական արդարության ամրապնդման պահանջով, որտեղ արդարության ընկալումը հանդես է գալիս որպես հասարակական կայունության կարևոր քաղաքական գործոն: Երրորդ՝ միջազգային լավագույն փորձի, մասնավորապես ՏՀԶԿ երկրների մոդելների ուսումնասիրման և համեմատական վերլուծության կարևորությամբ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու արդյունավետ մոտեցումներ և գնահատելու դրանց կիրառելիությունը ազգային համատեքստում: Վերջապես, թեմայի արդիականությունը պայմանավորված է հետխորհրդային երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, արդյունավետ կառավարման և կայուն զարգացման ապահովման հրատապությամբ՝ հաշվի առնելով առկա ինստիտուցիոնալ և սոցիալ-տնտեսական մարտահրավերները:

Հեղինակն իր հետազոտության հիմքում է դնում այն վարկածը, որ կառավարման արդյունավետության և վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետության միջև գոյություն ունի ուղղակի և փոխադարձաբար ամրապնդված կապմ այն է՝ բարձր ինստիտուցիոնալ կարողություններով, թափանցիկությամբ և հաշվետվողականությամբ բնութագրվող կառավարման պայմաններում վերաբաշխիչ քաղաքականությունը դառնում է առավել նպատակային և սոցիալական առումով հավասարակշռված՝ նպաստելով սոցիալական անհավասարությունների մեղմմանը: Հակառակ դեպքում՝ թույլ կառավարման պայմաններում նույն քաղաքական գործիքները կորցնում են իրենց արդյունավետությունը՝ հանգեցնելով ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման, կոռուպցիոն ռիսկերի աճի և հանրային վստահության նվազման: Հետևաբար, արդյունավետ կառավարումը հանդես է գալիս որպես արդար և կայուն վերաբաշխման համակարգերի ձևավորման առանցքային նախապայման, որոնց հաջող իրագործումն էլ, իր հերթին, ամրապնդում է կառավարման արդյունավետության ինստիտուցիոնալ հիմքերը:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը ձևավորվել է համակցված մոտեցմամբ՝ ներառելով որակական և քանակական մեթոդների կիրառումը: Հետազոտության ընթացքում իրականացվել է թեմային վերաբերող գիտական գրականության վերլուծություն՝ խնդրի տեսական հիմքերը, տարբեր մոտեցումները և դրանց փոխլրացումները բացահայտելու նպատակով: Կիրառվել է համակարգային մոտեցում՝ վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցությունը որպես միասնական ամբողջություն դիտարկելու համար:

Հետազոտության էմպիրիկ մասը հիմնված է դեպքային ուսումնասիրության մեթոդի վրա, որը թույլ է տվել գնահատել ՏՀԶԿ և հետխորհրդային պետությունների, այդ թվում՝ ՀՀ պետական կառավարման համակարգերի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը վերաբաշխման գործընթացների վրա: Համեմատական վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտելու տարբեր երկրների փորձի ընդհանուր և տարբերիչ գծերը, ինչպես նաև առանձնացնելու արդյունավետ և ոչ արդյունավետ մոդելները:

Բացի այդ, կիրառվել են վիճակագրական և էմպիրիկ վերլուծության մեթոդներ՝ քանակական տվյալների մշակման, համապատասխան հաշվարկների (Gini, Government Effectiveness Index, Պիրսոնի հարաբերակցային գործակից) համեմատական գնահատման և փոխկապակցվածությունների բացահայտման նպատակով: Վերլուծության, համադրման և ընդհանրացման մեթոդները ծառայել են ստացված արդյունքների համակարգմանը, եզրակացությունների ձևակերպմանը և գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակմանը:

Ատենախոսությունն առանձնանում է մի շարք էական գիտական և կիրառական առավելություններով: Նախ, այն հայաստանյան քաղաքականագիտական հետազոտական դաշտում առաջին անգամ առաջարկում է վերաբաշխիչ քաղաքականության համալիր և համակարգված վերլուծություն՝ կառավարման արդյունավետության հետ փոխկապակցված, ինչը ապահովում է թեմայի նկատմամբ գիտականորեն նոր և ամբողջական հայացք: Աշխատանքում մշակվել է համակցված տեսա-մեթոդաբանական մոտեցում, որի շրջանակում առաջարկվում է համակարգային մոդել՝ բացահայտելու վերաբաշխիչ քաղաքականության և

կառավարման արդյունավետության փոխազդեցությունը և դրանց համատեղ ազդեցությունը սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշների վրա:

Ատենախոսությունը առավելություն ունի նաև կիրառված մեթոդաբանության տեսանկյունից, քանի որ հաջողությամբ համադրվում են որակական և քանակական մեթոդները, դեպքային ուսումնասիրությունը, համեմատական և վիճակագրական վերլուծությունները, ինչը բարձրացնում է ստացված արդյունքների գիտական հիմնավորվածությունն ու վստահելիությունը: Հատուկ արժեք է ներկայացնում հետխորհրդային պետությունների, մասնավորապես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական-ինստիտուցիոնալ առանձնահատկությունների խորքային ուսումնասիրությունը, որի արդյունքում բացահայտվում են այն ինստիտուցիոնալ և կառավարչական գործոնները, որոնք պայմանավորում են վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետությունը կամ սահմանափակում դրա հաջող իրականացումը:

Միաժամանակ, աշխատանքն ունի ընդգծված գործնական ուղղվածություն. ձևակերպված եզրակացություններն ու առաջարկությունները կարող են կիրառվել պետական քաղաքականությունների մշակման և հանրային կառավարման համակարգի բարելավման գործընթացներում՝ նպաստելով սոցիալական արդարության ամրապնդմանը, տնտեսական աճի կայունությանը և կառավարման արդյունավետության ինստիտուցիոնալ հիմքերի հզորացմանը:

Ատենախոսությունն ունի կուռ տրամաբանական կառուցվածք, որն ամփոփում է ընտրված թեմայի տեսական և կիրառական ուղղությունները:

**Առաջին գլուխը՝** «Պետության վերաբաշխիչ քաղաքականությունը հանրային քաղաքականության մշակման և իրականացման համատեքստում», նվիրված է պետության վերաբաշխիչ քաղաքականության տեսական և հայեցակարգային հիմքերի վերլուծությանը՝ այն դիտարկելով հանրային քաղաքականության մշակման և իրականացման համատեքստում: Գլխում բացահայտվում է վերաբաշխիչ քաղաքականության դերը կայուն զարգացման, սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության ապահովման գործընթացներում՝ ընդգծելով պետական կառավարման արդյունավետության առանցքային նշանակությունը: Միաժամանակ ներկայացվում են հանրային քաղաքականության տիպաբանության և վերաբաշխման սոցիալ-տնտեսական մեխանիզմների վերաբերյալ հիմնական տեսական մոտեցումներն ու դրանց կիրառելիության սահմանները:

**Երկրորդ գլուխը՝** «Վերաբաշխիչ քաղաքականության իրականացման միջազգային փորձը և արդի միտումները (ՏՀԶԿ երկրների օրինակով)», նվիրված է ՏՀԶԿ երկրների օրինակով վերաբաշխիչ քաղաքականության իրականացման միջազգային փորձի և արդի միտումների վերլուծությանը՝ կենտրոնանալով եկամուտների անհավասարության, սոցիալական արդարության և աղքատության նվազեցման հարցերի վրա: Գլխում բացահայտվում է, որ վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն սոցիալ-տնտեսական գործոններով, այլև հասարակական ընկալումներով, քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրով ու կառավարման որակով: Եզրահանգվում է, որ արդյունավետ կառավարումը և եկամուտների հավասարակշռված վերաբաշխումը ՏՀԶԿ երկրներում հանդես են գալիս որպես կայուն սոցիալ-տնտեսական զարգացման փոխկապակցված և փոխլրացնող նախապայմաններ:

**Երրորդ գլուխը՝** «Վերաբաշխիչ քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատման հիմքերի կայացումը և զարգացումը (հետխորհրդային երկրների օրինակով)», նվիրված է վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխհարաբերությունների ուսումնասիրությանը հետխորհրդային երկրների, մասնավորապես Հայաստանի Հանրապետության օրինակով: Գլխում բացահայտվում է, որ արդյունավետ կառավարման ձևավորումը հետխորհրդային տարածքում պայմանավորված է ինստիտուցիոնալ զարգացման ուղիներով, քաղաքական կամքով և տեղական համատեքստին հարմարեցված բարեփոխումներով, ինչը ուղղակիորեն ազդում է վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետության վրա: Եզրահանգվում է, որ ինստիտուցիոնալ կայացած կառավարման համակարգը նախապայման է սոցիալական արդարության, հանրային վստահության ամրապնդման և սոցիալ-տնտեսական երկարաժամկետ կայունության ապահովման համար:

Աշխատանքում իրականացված է օգտագործված աղբյուրների համալիր ուսումնասիրություն՝ հիմնականում շեշտադրելով օտարալեզու հեղինակների աշխատանքները, հայաստանյան և միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայք-էջերի քանակական տվյալները, ինչպես նաև թեմային առնչվող հայեցակարգային-ռազմավարական փաստաթղթերը:

Աշխատանքի շրջանակում իրականացված համապարփակ վերլուծությունը փաստում է, որ կառավարման արդյունավետության ցուցանիշների բարելավում, եթե այն ուղեկցվի ինստիտուցիոնալ վերափոխումներով և մարդկային ներուժի զարգացման ծրագրերով: Այսինքն, կարող ենք արձանագրել, որ կառավարման բարեփոխումների կայունության կարևոր պայման հանդիսացող կառավարման միջազգային չափորոշիչների և լավագույն փորձի փոխառումը կարող է ծառայել որպես արդյունավետության բարձրացման կարևոր գործիք այն դեպքում, եթե ապահովվեն վերջիններիս տեղային հարմարեցումը և ազգային առանձնահատկությունների պահպանումը: Բացի այդ, աշխատանքում իրականացված վերլուծությունը վերահաստատվում է հիմնարար այն դիրքորոշումը, ըստ որի վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության միջև առկա է անքակտելի և փոխադարձաբար պայմանավորող փոխկապակցվածություն, որը ոչ միայն ազդեցություն է գործում սոցիալ-տնտեսական գործընթացների վրա, այլև ձևավորում է զարգացման նոր որակի մոդել՝ նպաստելով կայուն, արդյունավետ և ինստիտուցիոնալապես կայացած կառավարման համակարգերի ձևավորմանը:

Այնուհանդերձ, աշխատանքում առկա են մի շարք թերություններ, մասնավորապես՝

1. Հեղինակն անդրադառնալով պետության վերաբաշխիչ քաղաքականության և արդյունավետության փոխկապակցվածության խնդրին՝ հատկապես կարևորել է Համաշխարհային Բանկի Ինստիտուտի կողմից առաջադրված պետական կառավարման որակի գնահատման ցուցիչներից կառավարության արդյունավետության և որակի կարգավորման, ինդեքսները: Կարծում եմ, որ պետք էր դիտարկել բոլոր ցուցիչների ագրեգացման եղանակով կառավարման որակի գնահատման արդյունքները, քանի որ բոլոր ցուցիչներն էլ փոխկապված են և, մեծ հաշվով, նրանցով բնութագրվող բոլոր գործոններն էլ հավասարապես կարող են ազդեցություն ունենալ պետությունների կողմից իրականացվող բաշխիչ ու վերաբաշխիչ քաղաքականությունների արդյունավետության վրա: Օրինակ, քաղաքական կայունության և հաշվետվողականության ինդեքսները՝ բնութագրելով նաև

երկրում հանրային մասնակցայնության մակարդակը, էական ազդեցություն կարող էին ունենալ Անդերսոնի կողմից Լոուիի տիպաբանության վերանայման արդյունքներով (էջ.38 - 39) առաջարկված և «Պետական համոզում» լրացուցիչ բաղադրիչով պայմանավորված վերաբաշխիչ քաղաքականության համատեքստում:
Աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից Անդերսոնի կողմից առաջադրված Լոուիի՝ հանրային քաղաքականությունների տիպաբանությունում, «Պետական համոզում» նոր գործոնը դիտարկվեր նաև հանրային գերակա շահի եզրաբանության տեսանկյունից (էջ.40)

2. Դիտարկելով արդյունավետության գործոնը կառավարության կողմից քաղաքականությունների մշակման և դրանք իմպլեմենտացնելու կարողության տեսանկյունից՝ հեղինակը պատշաճ կերպով չի անդրադարձել այդ քաղաքականությունների բովանդակության նշանակությանը, հատկապես վերաբաշխիչ գործողություններով օրինաչափված սոցիալական արդարության հաստատման ռազմավարական ուղենիշի առումով: Թերևս այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ հեղինակը առաջ քաշելով հետազոտության վարկածը, արդար և կայուն վերաբաշխման հաջողությունը դիտարկել է, որպես արդյունավետության ամրապնդման գործոն (էջ.11): Միևնույն ժամանակ, թեզում Պիրսոնի կորելյացիոն մոդելում՝ կառավարման արդյունավետության մասով դիտարկելով կառավարության արդյունավետության և կարգավորման որակի ցուցիչների, իսկ վերաբաշխիչ քաղաքականության մասով՝ Ջինի գործակցի արժեքները (էջ.141), հեղինակն արդյունքում արդարացիորեն կարևորել է՝ արհեստավարժ և պրոֆեսիոնալ բյուրոկրատական ապարատի առկայությունը վերաբաշխիչ քաղաքականության իրականացման արդյունավետության գործում (էջ.143), սակայն հետագա շարադրանքում չի անդրադարձել այս կարևորագույն գործոնի համար անհրաժեշտ հանրային ծառայության համակարգաստեղծ սկզբունքներին և դրանց ինստիտուցիոնալացման անհրաժեշտությանը, որոնց բացակայությունը կարող է հանգեցնել՝ քաղաքականության բյուրոկրատացման և (կամ) բյուրոկրատիայի քաղաքականացման:

3. Աշխատանքում, անդրադարձ կատարելով վերաբաշխիչ քաղաքականության սոցիալ-քաղաքական ասպեկտներին՝ հեղինակն առանձնացրել է վերաբաշխիչ քաղաքականության այլընտրանքային գործիքները (էջ.56 - 59), սակայն հետագա շարադրանքում չի ներկայացրել այդ գործիքակազմի արդի կիրառության մեթոդները: Մասնավորապես, գների վերահսկման քաղաքականության մեջ կարելի էր ներկայացնել առաջարկի էլաստիկությունը գնի նկատմամբ, որը հասանելի է ավելացված ապրանքների գնիջեցման պայմաններում: Օրինակ՝ սմարթֆոնների պարագայում, որպես ավելացված ապրանք կարող է դիտարկվել զանազան հավելվածները, որոնք շուկայում վաճառվում են գրեթե զրոյական արժեքով: Դա իր հերթին խթանում է սմարթֆոնների պահանջարկը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է վերջիններիս արտադրության աճին: Այլ խոսքով, ոչ թե առաջարկ – պահանջարկ կորերի դասավորությունն է փոխվում, այլ առաջարկի կորն է դեպի աճողական ուղղությամբ տեղաշարժվում: Այսօրինակ «փափուկ» միջամտությամբ հանարավոր է դառնում մեղմել պետության կարգավորիչ դերի ազդեցությունը վերաբաշխիչ քաղաքականության սոցիալ-տնտեսական հետևանքների վրա:

4. Ցանկալի կլիներ, որ ՀՀ Հանրային կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարությունը քննարկելիս (էջ.158 - 160), հեղինակն անդրադառնար ոչ միայն դրանում

առկա սկզբունքներին, այլ՝ նաև ամրագրված հենասյուներին, մասնավորապես ՄՌԿ և ինստիտուցիոնալ բարելավման ռազմավարական մոտեցումներին, որտեղ հստակորեն մատնանշվում են պետության վերաբաշխիչ քաղաքականությանն առնչվող ուղենիշեր: Օրինակ, Պետություն-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ) կառուցակարգի վրա խարսխված ծառայությունների մատուցման վերաբաշխումը և կամ ծառայությունների և դրանց մատուցման համար անհրաժեշտ ռեսուրսների տեղաբաշխման գործընթացում արտապատվիրակման միջոցով մասնակցայնության ապահովումը:

Սակայն վերոնշյալ թերությունները չեն ստվերում աշխատանքի գիտա-ակադեմիական և կիրառական արժեքը: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն հիմնավորված գիտագործնական նշանակություն: Ելնելով վերոնշյալ հանգամանքներից՝ կարծում եմ, որ Նարինե Վյաչեսլավի Ասրյանի «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

X

VERIFIED OCSP 28/12/2025 16:10:38 GMT+4

Signed by: KALASHYAN VACHE 3014660477

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի հանրային կառավարման
ամբիոնի դոցենտ, ք. գ. թ.՝ Վ. Ռ. Քալաշյան

Քաղաքական գիտությունների թեկնածու Վ. Քալաշյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար
բ.գ.թ., դոցենտ՝ Ա. Վ. Հովհաննիսյան

ք.Երևան
26.12.2025թ.